Ամսոյս 21-ին ի ասնի Ս. Ներսիսի Մեծի Հայրապետի և Խաղայ եպիսկոպոսի Վեհափառ Հայրապետն Ազգիս Ս. պատարագին Ներկայ գտնուելուց յետոյ եկեղեցու ուխտի հետ շուրջատարեալ և այլ սպասուք հանդուցեալ Ներսէս կաթուղիկոսի գերեզմանի միրայ հոգեհանգստեան պաշտօն կատարեց, խունն բազմութեան ներկայութեամբ՝ որ զանազան տեղերից եկած էին Ս. Միածնի կաթսան համբուրելու։ Եթէ չենք սխալվում ուխտաւորաց բազմութիւնը աւելի քան 1/4ը կըլինէր միւռոնօրհնութեան օրուայ։

ՕՐԱԳԻՐ

ՀԱՅՈՒՀԵՌՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

1886 թ. Մայիսի 4-ն Մոգնոյ Ս. Գէորգ եկեղեցոյ Ս. Գայիանեան օրիորդաց Ուսումնարանի դահլիճում նախագահութեամբ արժանապատիւ Բարութիւն աւագ քահանայ Սուքանանճեանի, կայացաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովին ներկայ էին Ընկերութեան 36 անդամ։

Այն ժողովին ընկերութեան վարչութիւնը՝ համաձայն կանոնադրութեան 29 յօդուածի ներկայացրեց ի քննութիւն և ի հաստատութիւն 1885 թ. ել և մուտից հաշիւը։ Այն հաշիւը քննելուց առաջ վարչութեան անդամ տիկ. Սրբուհի Երիցեանը կարդաց վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ որ տարուայ սկզբներին քանի որ Հայոց ծխական ուսումնարանները բաց էին, վարչութիւնը չէր դադարում կանոնադրութեամբ իրան դնադրած գերը անթերի կատարելուց բայց նրանց փակելուց յետոյ նա ենթարկուեցաւ անգործունէութեան տաղտկալի վիճակին։ Վարչութեան այս չէզոք դրութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ և ընկերութեան նիւթական միջոցների վերայ, որովհետև նա չկարողացաւ հրաւիրել ոչ մի նոր մշտական անդամ, չունեցաւ բաւարար թիւով տարեկան անդամներ և չը վատահացաւ կանոնադրութեամբ իրան թոյլատրուած պարահանդէսներ և կոնցերտներ կազմել։ Տեղեկագրից երևեցաւ որ թէև հաշուի մէջ նշանակուած է տարեկան 60 անդամների վճարը, իսկ նրանց անուանացուցակում՝ աւելացրած են 9 անդամ՝ ևս, բայց սրանց անունները ստացուած են ուշ՝ հաշիւը պատրաստելուց յետոյ։ ուստի վերջին 9 անդամներից ստացած վճարը վարչութիւնը առաջիկայ հաշուի մէջ կը մտցնէ ի շարս ընծայաբերութիւնների։

Վարչութիւնը 1886 թ. համար նախահաշիւ չկազմեց որովհետև մինչև այժմ՝ որոշուած չէ Հայոց դպրոցների խնդիրը. ուստի մտադիր է մի արտաքոյ կարգի ընդհանուր ժողով հրաւիրել երբ այդ խնդիրը կորոշուի։

Վարչութիւնը ցաւ յայտնեց իւր բազմաշխատ անդամ՝ սրիորդ Նատալիա Տէր Յովհաննիսեանի մահուան մասին, աւելացնելով որ հանգուցեալ յուղարկաւորութեան տխուր հանդէսը նա սրբազան պարտք համարեց պատուելու։

Ընդհանուրի վարչութեան առաջարկութեան համաձայն՝ ընդհանուր ժողովը հաստատեց 1885 թ. ելևմտից հաշիւը և որոշեց առաջարկել նորան ի քննութիւն և ի հաստատութիւն նախահաշիւն՝ երբ Հայոց դպրոցների խնդիրը կորոշուի. իսկ մինչև այդ ժամանակ վարչութեան ընթացիկ ծախսերը անել ընկերութեան գումարներից այն չափով որ որոշուած է կանոնադրութեան 17 յօդուածի ա. կէտի մէջ։

Յետոյ ընդհանուր ժողովը գրագուեցաւ վարչութեան նոր կազմակերպութեամբ, որովհետև չորս տարի լրանալու պատճառով վարչութիւնից դուրս

էին գնում չորս անդամ։ Ուստի որոշուեցաւ ընտրել վարչութեան չորս անդամ և երեք փոխանդամներ։ Ընտրութիւնը կատարուեցաւ տոմսակներով և առաջարկուեցան 37 հոգի. որոնցից ձայնից բազմութիւնը ստացան հետևեալ անձինք 1) իշխ. Կատարինէ Բէհբութեան 35 ձայն. 2) տ. Կատարինէ Եւանդուլեան 34։—3) տ. Սոֆիա Բարայեան 34—։4) օր. Սոֆիա Փսարեան 28։—5) օր. Մարիամ Զիլթախեան 27։—6) տիկ. Մարիամ Ծովիանեան 24 —7) օր. Մարիամ Մուլթաֆեան 23։ — 8) տիկ. Վարվառէ Խարազեան 19։—9) օր. Մարիամ Մատինեան 17։—10) օր. Նունէ Սալամբէկեան 17։— 11) օր. Շուշանիկ Բայսողոլեան 16։—12) տիկ. Աննա Վրդանեան 16։—13) օր. Նունէ Բուզդանեան 16։—14) օր. Վարվառէ Միրիմանեան 13։—15) տիկ. Վարվառէ Եսայեան 12։—և 16) օր. Սոֆիա Անանեան 11 ձայն։ Սոցանից իշխ. Բէհբութեան, տիկնայք Եւանդուլեան, Բարայեան և օր. Փսարեան հրատարակուեցան վարչութեան անդամ. իսկ փոխանդամներ — օր. Զիլթախեան. տ. Ծովիանեան, օր. Մուլթաֆեան, տ. Խարազեան, օր. Բայսողոլեան, տ. Վրդանեան և օր. Բուզդանեան։ Օրիորդք Մատինեան և Սալամբէկեանը հրաժարուեցան։

Ժամի 1½ արժանապատիւ նախագահը գոցեց նիստը։

Վարչութեան Ատենադպիր Ա. Քիշմիշեան.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Ընորհակալութեամբ ստացանք

Ա. Բժ. Գ. Տէր Գրիգորեանցի Դոկտորութեան դիսերտացիան, տպեալ ընդ վերնագրովս

«Къ вопросу о вліяніи обильнаго питья воды на азотистый обмѣнъ и усвоеніе азотитыхъ частой пищи»

Բ. Փունջ իմաստալի բանից աղգային մատենագրաց։ խմբագրեաց Սարգիս քահանայ Մաքսուդեան. տպագրեալ յօգուտ Ս. Թէոդորոսի եկեղեցւոյն Նոր—Նախիջևանի։

Դ. «Պարտք» հեղինակութիւն Սամուէլ Սմայլսի տեսոր տուաջին թարգմ. Նիկողայոս քահ. Բոսնակեանց։ տպած է Թոստովում. գինն է 35 կոպ.

Դ. «Հնգու աբաղաղ» թարգ. հրատարակութիւն Մոսկուայի Հայ ուսանողների գրականական ընկերութեան. տպած Մոսկ. գինն է 10 կոպ.

«Հնգու աբաղաղ»ը չորրորդ հրատարակութիւնն է Մոսկվայի հայ ուսանողների որոնք իրանց պարապ ժամերը կամենալով օգտաւէտ գործի ծառայացնել հարստացնումն մեր գրականութիւնը ժողովրդին և մանուկներին մատչելի գրքոյկներ հրատարակելով վայելուչ դիրքով և չափաւոր գնով։

Գովելով Մոսկուայի հայ ուսանողների այս օգտաւէտ գործը, որ ամենայն քաջալերութեան արժանի է կը ցանկայինք որ ամենայն տեղերի ուսանողք այս մասին հետևող լինէին Մոսկուայի ուսանողութեանը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ ՃԵՄԱՐԱՆԻ.

Շուշեցի Դպիր Կարապետ Տ. Գրիգորեան Իսկենդարեանց 10 ր. նուիրեաց Ճեմարանի Մայր Աթոռոյս և 5 բուբլի որբոց և այրեաց հոգևորականաց և խոստանայ ցկեանս նուիրել ամ ըստ ամէ գնոյն գումար։

Մարգարէ Ա. քահ. Եյսկ քաղաքի 25 բուբլի։

Ժառանգք հանգուցեալ Գէորգայ Խոյեցեանց Պ. Սարգիս և Սիմէօն 50 բուբ. ընդ ձեռն հոգ. կառավարութեան Աղէքսանդրապոլու։